2015-2016 ուսումնական տարում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ուսումնական հաստատությունների **նեթբուքերի** սպասարկման կարգ

Կրթահամալիրի գրադարանի, ընթերցասրահների տեխնիկական ֆոնդը( նոթբուքերը, նեթբուքերը,պրոեկտոր, այլ) համարվում է տվյալ մասնաճյուղի գույքը:

Տեխնիկան (նեթբուքը) վարձավճարով տրամադրվում են «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ուսումնական հաստատությունների սովորողին մեկ կամ կես ուսումնական տարվա համար՝ պայմանով, որ տեխնիկան վերադարձվի տվյալ ուսումնական հաստատության ընթերցասրահ նշված ուսումնական տարվա վերջին:

Տեխնիկան (նեթբուքը) տրվում է սովորողին միայն համապատասխան վարձավճարի վճարումից հետո, բացառությամբ այն դեպքի, երբ սովորողը դպրոցի կողմից ազատված է վարձավճարի մուծումից կամ ծնողի հետ դիմումի կամ պարտավորագրի համաձայն այն ուսումնական տարվա ընթացքում վճարելու համար:

Ուսումնական տարվա ընթացքում տեխնիկան (նեթբուքը) օգտագործելու համար սովորողին տրվում է.

1 շաբաթով- անվճար

2 շաբաթ -1000 ՀՀ դրամ

1 ամսով - 1000 ՀՀ դրամ

1 ուսումնական տարի- ամսեկան 1000 ՀՀ դրամ

Վարձավճարները պատկանում են դպրոցներին և կարող են օգտագործվել բացառապես մեկ նպատակի.

- Նոր ուսումնական տեխնիկա ձեռք բերելու կամ վնասվածը նորոգելու համար

Վճարումը կատարվում է փոխանցմամբ:

**Մասնագետը**

- Յուրաքանչյուր տեխնիկան գնահատում է ըստ մաշվածության աստիճանի (օրինակ՝ լավ  և բավարար)
- Ստուգում, ապահովում է ծրագրային փաթեթը

**Սովորողը**

- Պարտավոր է ուսումնական տարվա վերջում վերադարձնել տեխնիկան տվյալ ուսումնական հաստատության ընթերցասրահին:
- Պատասխանատու է տեխնիկայի վիճակի համար
- Գույքը փչացնելու դեպքում տվյալ անձը տեխնիկան վերանորոգում է սեփական միջոցներով կամ կատարում է համապատասխան վճարում (կրթահամալիրի, այլ մասնագետի գնահատումից հետո)
- Վերանորոգման համար կարող է դիմել կրթահամալիրի մասնագետին